

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԱՄ-ՄԱԾԲ-20/01**

ք. Աշտարակ

«20» փետրվար 2020 թ.

«ՀՀ Արագածոտնի մարզպետարանը», ի դեմս գլխավոր քարտուղար՝ **Հրաչյա Գևորգյանի**, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ԱՆԱՆԴԱ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն **Ա.Մանուկյանի**, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոմեքենաների վերանորոգման** ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 2 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **1000000** (մեկ միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման...

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (\$ՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 29 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

ՀՀ Արագածոտնի մարզպետարան

ՀՀ Արագածոտնի մարզ քաղաք

Աշտարակ Վարդգես Պետրոսյան

փողոց 4,

Հեռ.՝ 0232 3-22-51

ՀՀ ՖՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԳՐԻՄԱՌՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Հ/հ 900441041176

ՀՎՀՀ 05004247

գլխավոր քարտուղար՝ Հ.Գևորգյան

/ստորագրություն/

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

<<ԱՆԱՆԴԱ>> ՍՊԸ, ք.Երևան,
Կիկյան 12ա, հեռ.՝ 010 22-68-35

ՀՎՀՀ՝ 05009869

ananda2@mail.ru

Կոնվերս Բանկ ՓԲԸ

Հ/հ 1930000613360100

Տնօրեն՝ Ա.Մանուկյան

(ստորագրություն)



ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

* Ծառայության						
	անվանումը	չ/մ	քանակը	մատուցման տեխնիկական բնութագիրը	Առավելագույն գումարը /ՀՀ դրամ/	մատուցման ընդհանուր ժամկետները
1	Ավտոմեքենայի տեխնիկական սպասարկման ծառայություններ CPV50111130-1	դրամ	1	Նիսսան Տեանա Ներքոնշյալ ավտոմեքենաների մակնիշներ հավտոմեքենաների համար յուրաքանչյուր 7.000 կմ-ը մեկ շարժիչի յուղի և շարժիչի յուղի զտիչի փոխարինում / շարժիչի յուղի տարողությունը 1.7.-8.0 լիտր/7.000 կմ-ը մեկ տեխ.գնման և դիագնոստիկայի իրականացում, 15.000-20.000 կմ առջևի արգելակման կոճղակի փոխում, 30.000-35.000 կմ հետևի արգելակման կոճղակի փոխում, 14.000 կմ-ը մեկ օդի զտիչի փոխում, 20.000 կմ-ը մեկ օդորակիչի զտիչի փոխում, 20.000 կմ-ը մեկ վառելիքի զտիչի փոխում /120.000-150.000 կմ անտիֆրիզի փոխում, 70.000-80.000 կմ վառոցքի մոմերի փոխում, 70.000-80.000 կմ ԱՓՏ-ի յուղի և զտիչի փոխարինում, 70.000-80.000 կմ ինժեկտորի ֆարսոնկայի մաքրում, 80.000-90.000 կմ շարժիչի փոկի փոխարինում, անվաքացքի կարգաբերում (Առավելագույնը թվով 4 ավտոմեքենա	Գնման գործընթացը իրականացվում է <<Գնումների մասին>> համաձայն	Կնքվելիք պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2020թ. դեկտեմբերի 15-ը՝ պատվիրատուի կողմից ներկայացվող պահանջի հիման վրա, այդ պահանջը ներկայացվելու օրվանից հաշված մինչև 5 աշխատանքային օրվա ընթացքում: Առանձին դեպքերում պատվիրատուի կողմից կարող են սահմանվել ծառայության մատուցման այլ ժամկետներ:

h/h	SU-1 (տեխնիկական գնման/դիագնոստիկա) SU-2 (վերանորոգման) ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի, քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները (տեսակները)			
		Նիսսան Տեանա 2.5լ.2010 թ	Տոյոտա լենդ. cruiser prado 2,7	Վազ 21214 2006թ.	Դաեվո Մատիզ 0,8.2008թ.
		1	2	3	4
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումները	Նիսսան Տեանա 2.5լ.2010 թ	Տոյոտա լենդ. cruiser prado 2,7	Վազ 21214 2006թ.	Դաեվո Մատիզ 0,8.2008թ.
1	Բռնկման համակարգի ստուգում	0	0	0	0
2	Կցորդման համակարգի ստուգում	0	0	0	0

5	Դեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	0	0	0	0
	SU-2 ներառվող ծառայությունների անվանումները	Նիսսան Տեանա2.5լ.2010 թ	Տոյոտա լենդ քրուիսեր prado 2,7	Վազ 21214 2006թ.	Դաեվո Մատիզ 0,8.2008թ.
	1.Շարժիչ				
6	Շարժիչի համուճ և տեղադրում	55000	55000	20000	30000
7	Շարժիչի իջանդում արատավորում և հավաքում	20000	20000	10000	10000
8	Շարժիչի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	250000	200000	60000	80000
9	Շարժիչի գլխիկի համուճ տեղադրում միջադիրի փոխարինումով	45000	40000	15000	20000
10	Շարժիչի գլխիկի նորոգում, եռակցում հղկումով	20000	20000	10000	15000
11	Շարժիչի գլխիկի փականների փոխարինում հղկումով և խտաբուկերով 1 կ-տ	2000	2000	1000	1500
12	Վառոցքի մոմի բնիկի նորոգում	5000	5000	2000	3000
13	Շարժիչի փականների զսպանակների փոխարինում	1500	1500	500	1000
14	Փականների խցուկների փոխարինում 1 կ-տ	2000	2000	1000	1000
15	Հրիչների կամ հիդրոհրիչների փոխարինում 1 կ-տ	10000	10000	3000	5000
16	Շարժիչի մխոցաօղերի, հիմնական և շարժաբևի ներդրակների փոխարինում	10000	10000	5000	5000
17	Ծնկածև լիսեռի հղկում	15000	15000	7000	10000
18	Ծնկածև լիսեռի համուճ տեղադրում կամ փոխարինում	0	0	0	0
19	Ծնկածև լիսեռի ներդրակների փոխարինում 1 կ-տ	10000	10000	5000	5000
20	Ծնկածև լիսեռի ատամնախվի փոխարինում	15000	15000	10000	10000
21	Ծնկածև լիսեռի ուղղում	0	0	0	0
22	Ծնկածև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	10000	10000	5000	5000
23	Ծնկածև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	30000	30000	10000	10000
24	Շարժիչի բոլոր փոխարինում	100000	100000	50000	60000
25	Շարժիչի զլանի փոխարինում (гилзовка)	40000	40000	20000	25000
26	Մխոցի փոխարինում 1 հատ	10000	10000	3000	5000
27	Բաշխիչ լիսեռի համուճ և տեղադրում կամ փոխարինում	15000	15000	5000	8000
28	Բաշխիչ լիսեռի ականոցների համուճ տեղադրում կամ փոխարինում	10000	10000	2000	5000
29	Բաշխիչ լիսեռի խտաբուկի փոխարինում	3000	3000	1000	2000
30	Փոկանիվի փոխարինում	30000	30000	15000	20000
31	Շարժիչի ատամնավոր փոխարինում	30000	30000	10000	15000
32	Շարժիչի շղթայի փոխարինում	30000	30000	15000	20000
33	Շարժիչի քարտերի նորոգում (եռակցում)	10000	10000	5000	8000
34	Շարժիչի քարտերի փոխարինում, միջադիրի փոխարինումով	5000	5000	2000	3000
35	Շարժիչի քարտերի միջադիրի փոխարինում	7000	7000	3000	5000
36	Շարժիչի քարտերի համուճ, տեղադրում մաքրումով	8000	8000	4000	5000
37	Շարժիչի յուղի մղիչի փոխարինում	15000	15000	5000	8000
38	Շարժիչի յուղի մղիչի նորոգում, մաքրում	20000	20000	8000	10000

41	Օդաքաշակ փողրակի փոխարինում	5000	5000	2000	3000
42	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	25000	25000	5000	10000
43	Շարժիչի կափարիչի միջադիրի փոխարինում	10000	10000	2000	5000
44	Թափանիվի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	0	0
45	Շարժիչի կափույրի փոխարինում	0	0	0	0
46	Շարժիչի կափույրի միջադիրի փոխարինում	0	0	0	0
47	Շարժիչի շարժաթևի փոխարինում 1 հատ	5000	5000	2000	3000
48	Մխոցային օդակներ փոխարինում 1 կ-տ	5000	5000	1500	3000
49	Շարժիչի բաշխիչ լիսեռի երիթակի փոխարինում	0	0	0	0
50	Ատամնանիվի փոխարինում	10000	10000	2000	4000
51	Ատամնանիվի փոկի փոխարինում	10000	10000	2000	4000
52	Ատամնավոր փոկի պատյանի փոխարինում	15000	15000	5000	10000
53	Սուխարիկ փոխարինում 1կ/տ	3000	3000	1000	1500
54	Շարժիչի հանդարտիչի փոխարինում	30000	30000	10000	15000
55	Շարժիչի փոկի հոլովակի փոխարինում	3000	3000	2000	2000
56	Շարժիչի հոլովակի առանցքակալի փոխարինում	3000	3000	1000	2000
57	Շարժիչի առջևի կափարիչի փոխարինում, հանում, տեղադրում միջադիրի փոխարինումով	20000	20000	5000	8000
58	Շարժիչի յուղի արանքաշափիչի (Քցտ) իրանի փոխարինում	5000	5000	2000	3000
59	Շարժիչի փոկի ձգիչի փոխարինում	5000	5000	1200	3000
60	Շարժիչի փոկի ձգիչի նորոգում	5000	5000	1500	2000
61	Շարժիչի գամասեղի փոխարինում	10000	10000	3000	5000
62	Շարժիչի գամասեղի փոխարինում բնիկի նորոգումով	15000	15000	5000	8000
63	Գլխիկի հեղույսի փոխարինում	20000	20000	8000	10000
64	Ծնկած և լիսեռի հեղույսի փոխարինում	0	0	0	0
65	Շարժիչի էլեկտրական համակարգի հանում տեղադրում	10000	10000	2000	5000
66	Շարժիչի վառելիքի սնման համակարգի հանում տեղադրում	5000	5000	2000	3000
2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ					
67	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	0	0	0	0
68	Ավտոմեքենայի յուղում	2000	2000	1000	1000
69	Համակարգչային ախտորոշում, թերությունների վերացմամբ	5000	5000	0	5000
70	Յուղի ռադիատորի փոխարինում	5000	5000	3000	4000
71	Յուղի ռադիատորի նորոգում	8000	8000	3000	5000
72	Շարժիչի էլեկտրոնիկ փոխարինում	15000	15000	5000	10000
73	Շարժիչի էլեկտրոնիկ միջադիրի փոխարինում	0	0	0	0
74	Վառոցքի մոմի փոխարինում 1 կ-տ	3000	1000	500	500
75	Վառելիքի նուրբ մաքրման գտիչի փոխարինում	15000	15000	5000	5000
76	Օդի գտիչի փոխարինում	0	0	0	0
77	Օդի ծախսաչափիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	2000	
78	Օդի գտիչի փողրակի հանում և			2000	

79	Կարբյուրատորի փոխարինում կամ հանձն տեղադրում	0	0	0	0
80	Կարբյուրատորի վերանորոգում	0	0	0	0
81	Ինժեկտորի բոցամուղերի փոխարինում	20000	15000	5000	10000
82	Ինժեկտորի բոցամուղերի մաքրում	25000	20000	10000	15000
83	Բոցամուղի կողավորում	0	0	0	0
84	Ինժեկտորի բոցամուղի ստաբուլներ փոխարինում	0	0	0	0
85	Բենզամղիչի փոխարինում	20000	15000	5000	10000
86	Վառելիքի կոշտ մաքրման զտիչի փոխարինում	5000	5000	3000	3000
87	Վառելանյութի խողովակի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000	5000	5000
88	Բռնկման կարգավորում	0	0	0	0
89	Ղեկավարման բլոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	0	0
90	Ղեկավարման բլոկի վերանորոգում	30000	20000	5000	10000
91	Վառելիքի բաքի հանում և տեղադրում կամ փոխարինում	20000	20000	5000	8000
92	Վառելիքի բաքի մաքրում	25000	25000	10000	15000
93	Օդի ծախսի տվիչի փոխարինում	3000	3000	1000	2000
94	Տրամյորի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	5000	0
95	Տրամյորի վերանորոգում	0	0	10000	0
96	Ջրի ջերմաստիճանի տվիչի փոխարինում	3000	3000	1000	2000
97	Ջրի խողովակի, փողրակի փոխարինում	3000	3000	1000	2000
98	Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի փոխարինում	15000	15000	5000	10000
99	Բենզոբաքի բենզոմղիչի ցանցի մաքրում	15000	15000	5000	10000
100	Յուղի ճնշման տվիչի փոխարինում	3000	3000	1000	1000
101	Տվիչի փոխարինում	3000	3000	1000	1000
3. Սառեցման և արտաժման համակարգ					
102	Հովիարի փոխարինում	5000	5000	1000	3000
103	Հովիարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	1000	3000
104	Ռադիատորի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000	5000	5000
105	Ռադիատորի նորոգում	30000	30000	10000	15000
106	Եերտափեղկի փոխարինում	10000	10000	2000	5000
107	Եերտափեղկի կառավարման ձգաձողի փոխարինում	10000	10000	2000	5000
108	Ընդարձակող բաքի փոխարինում	0	0	0	0
109	Ընդարձակող բաքի փողրակի փոխարինում	0	0	0	0
110	Ջրի ծորակի փոխարինում	0	0	0	0
111	Հովացման համակարգի ռետինե փողրակի փոխարինում	0	0	0	0
112	Հովիարի շարժիչի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	1000	3000
113	Վառարանի ռադիատորի փոխարինում, բոլոր աշխատանքները ընդգրկված	25000	20000	10000	15000
114	Վառարանի ռադիատորի նորոգում	10000	10000	3000	5000
115	Վառարանի շարժիչի փոխարինում	30000	25000	15000	15000
116	Թերմոստատի փոխարինում	5000	5000	3000	3000
117	Ջրի մղիչի փոխարինում միջադիրով	30000	30000	5000	10000
118	Ջրի մղիչի միջադիրի փոխարինում	0	0	0	0

120	Գեներատորի փոկի ձգող հոլովակի փոխարինում	5000	5000	2000	3000
121	Ջրի ռադիատորի վերանորոգում	30000	30000	10000	20000
122	Թերմոստատի միջադիրի փոխարինում	0	0	0	0
123	Խլարարի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	3000	5000
124	Խլարարի 1 հատխողովակի փոխարինում	0	0	0	0
125	Խլարարի անուրի (xamyr) փոխարինում	0	0	0	0
126	Խլարարի ներդիրի փոխարինում	0	0	0	0
127	Խլարարի կախոցի փոխարինում	0	0	0	0
128	Չովացման հեղուկի փոխարինում	5000	5000	3000	3000
4. Կցորդում և ՓՏ					
129	Աշխատանքային կամ գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	0	3000
130	Աշխատանքային կամ գլխ. գլանի նորոգում	250000	250000	25000	35000
131	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	0	0	0	0
132	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	0	0
133	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	0	0
134	Կցորդման փողրակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	10000	0	0
135	Կցորդման երկաթնի փոխարինում	0	0	0	0
136	ՓՏ-ի հիմնական նորոգում, ներառյալ բոլոր աշխատանքները	250000	250000	25000	35000
137	ՓՏ-ի հավաքածուի փոխարինում	0	0	0	0
138	ՓՏ-ի առջևի խտաբուկի փոխարինում	0	0	0	0
139	ՓՏ-ի հետևի խտաբուկի փոխարինում	0	0	0	0
140	ՓՏ-ի հանում և տեղադրում	0	0	0	0
141	ՓՏ-ի քանդում, արատավորում, հավաքում	0	0	0	0
142	ՓՏ-ի պատյանի փոխարինում	0	0	0	0
143	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	0	0	0	0
144	ՓՏ-ի միջանկյալի սեռի փոխարինում	0	0	0	0
145	ՓՏ-ի ատամնանիվի փոխարինում	0	0	0	0
146	ՓՏ-ի առաջնային լիսեռի փոխարինում	0	0	0	0
147	ՓՏ-ի երկրորդային լիսեռի փոխարինում	0	0	0	0
148	ՓՏ-ի փոխարկման մեխանիզմի փոխարինում	0	0	0	0
149	ՓՏ-ի բարձիկի փոխարինում	0	0	0	0
150	ՓՏ-ի փոխանցման լծակի փոխարինում	0	0	0	0
151	ՓՏ-ի յուղի փոխարինում	0	0	0	0
152	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	0	0	0	0
5. Բաշխիչ տուփ, կարդանային լիսեռ					
153	Բաշխիչ տուփի հիմնական նորոգում,	250000	230000	30000	40000
154	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	0	0
155	Բաշխիչ տուփի քանդում և արատավորում, հավաքում	0	0	0	0
156	Բաշխիչ տուփի բարձր փոխանցման մեխանիզմի փոխարինում	0	0	0	0
157	Բաշխիչ տուփի ցածր փոխանցման մեխանիզմի փոխարինում	0	0	0	0
158	Բաշխիչ տուփի դիաֆրագմաների փոխարինում	0	0	0	0

160	Բաշխիչ տուփի միջակա լիսեռի փոխարինում	0	0	0	0
161	Բաշխիչ տուփի առաջնային լիսեռի փոխարինում	0	0	0	0
162	Բաշխիչ տուփի երկրորդի փոխարինում	0	0	0	0
163	Բաշխիչ տուփի բարձիկի փոխարինում	0	0	0	0
164	Բաշխիչ տուփի խտաբուկի փոխարինում	0	0	0	0
165	Բաշխիչ տուփի առանցքակալի փոխարինում	0	0	0	0
166	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	5000	0	0
167	Կարդանային լիսեռի խաչուկի փոխարինում	0	15000	0	0
168	Բաշխիչ տուփի կալունակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	0	0
169	Տվիչի փոխարինում	0	0	0	0
170	Բաշխիչ լիսեռի ատամնանիվի փոխարինում	0	0	0	0
171	Կարդանային լիսեռի միջ. կախոցի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	0	0
6. Առջևի և հետևի կամրջակներ					
172	Առջևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	35000	0	0
173	Առջևի կամրջակի գլխավոր փոխանցման (ռեդուկտոր) քանդում, արատավորում և հավաքում	20000	20000	10000	20000
174	Առջևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	0	0
175	Առջևի կամրջակի կիսաստնու առանցքակալի փոխարինում	0	0	0	0
176	Առջևի կամրջակի կիսաստնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում	0	0	0	0
177	Կամրջակի յուղի փոխարինում	3000	3000	1000	3000
178	Առջևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	3000	5000
179	Առջևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	30000	30000	10000	15000
180	Հետևի կամրջակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	25000	0	0
181	Հետևի կամրջակի լիկատար քանդում, արատավորում և հավաքում	0	10000	0	0
182	Հետևի կամրջակի կիսաստնու հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	0	0
183	Հետևի կամրջակի կիսաստնու առանցքակալի փոխարինում	0	0	0	0
184	Հետևի կամրջակի կիսաստնու առանցքակալի խտաբուկերի փոխարինում	0	0	0	0
185	Հետևի կամրջակի բռունցքի գնդաձև հենարանի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	0	0
186	Հետևի կամրջակի դիֆերենցիալի փոխարինում	0	0	0	0
187	Հետևի կամրջակի բլկավորման համակարգի նորոգում	0	0	0	0
188	Կամրջակի տվիչի փոխարինում	0	0	0	0
7. Կախոց					
189	Տրավերսի հանում և տեղադրում կամ փոխարինում	15000	0	5000	10000
190	Ձախ կամ աջ իռդակալի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	2000	4000
191	Առջևի անվակունդի առանցքակալի փոխարինում	5000	5000	2000	4000
192	Առջևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	2000	4000
193	Հետևի անվակունդի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	2000	4000
194	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	5000	5000	2000	4000

196	Ձախ կամ աջ հողակապի խտաբուկների փոխարինում	5000	5000	2000	4000
197	Ցնցամեղմիչի բասակի փոխարինում	5000	5000	2000	4000
198	Առջևի զսպանակի փոխարինում	5000	5000	2000	4000
199	Առջևի ցնցամեղմիչի համում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	2000	4000
200	Հարվածամեղմիչի վռանների փոխարինում	5000	5000	2000	4000
201	Ներքևի լծակի համում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	2000	4000
202	Ներքևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	5000	5000	2000	4000
203	Ներքևի լծակի հեղույսի փոխարինում	5000	5000	2000	4000
204	Հարվածիչի (բարձիկի փոխարինում)	5000	5000	2000	4000
205	Վերևի լծակի համում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	2000	4000
206	Վերևի լծակի վռանների փոխարինում 1 հատ	5000	5000	2000	4000
207	Վերևի լծակի հեղույսի փոխարինում	5000	5000	2000	4000
208	Հետևի վերևի լծակի վռանի փոխարինում 1 հատ	5000	5000	2000	4000
209	Գնդե հողակապերի պատյանի փոխարինում	5000	5000	2000	4000
210	Գնդե հողակապերի փոխարինում	5000	5000	2000	4000
211	Կայունարարի համում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	2000	4000
212	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	5000	5000	2000	4000
213	Հետևի կախոցի անվաքացքի կարգավորում	5000	5000	2000	4000
214	Հետևի կայունարարի վռանների փոխարինում	5000	5000	2000	4000
215	Կայունարարի կալունակի փոխարինում	5000	5000	2000	4000
216	Հետևի զսպանակների փոխարինում	5000	5000	2000	4000
217	Հետևի ձգածողի համում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	2000	4000
218	Հետևի անկյունագծային լծակի համում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	2000	4000
219	Ջսպանի փոխարինում	5000	5000	2000	4000
220	Ջսպանի վռանների փոխարինում 1 հատ	5000	5000	2000	4000
221	Հետևի ցնցամեղմիչի փոխարինում	5000	5000	2000	4000
222	Հետևի հարվածամեղմիչի վռանների փոխարինում	5000	5000	2000	4000
223	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում 1 հատ	5000	5000	2000	4000
8. Ղեկային մեխանիզմ					
224	Ղեկայունակի(USuSվՍՈ) հիմնական նորոգում,	70000	70000	30000	50000
225	Ղեկայունակի(USuSվՍՈ) արորիկի փոխարինում	0	0	0	0
226	Ղեկայունակի (USuSվՍՈ) առանցքային սոնու փոխարինում	0	0	0	0
227	Ղեկայունակի(USuSվՍՈ) խաչուկների փոխարինում	0	0	0	0
228	Ղեկայունակի(USuSվՍՈ) վերանորոգման հավաքածուի փոխարինում	0	0	0	0
229	Ղեկայունակի(USuSվՍՈ) քանդում, արատավորում, հավաքում	50000	50000	20000	35000
230	Ղեկային մեխանիզմի ազդանշանի փոխարինում	0	0	0	0
231	Ղեկայունակի պատյանի փոխարինում	3000	3000	2000	2000
232	Ղեկային մեխանիզմի փականքի փոխարինում	0	0	0	0
233	Ղեկային մեխանիզմի ղեկայունակի ամրացման անուրի փոխարինում	0	0	0	0
234	Ղեկային ձողի առանցքակալի փոխարինում	4000	4000	2000	3000

236	Ղեկային կալուցի միջին ձգանի փոխարինում	0	0	0	0
237	ՂԿ-ի առանցքակալի կամ վռանների փոխարինում	0	0	0	0
238	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	0	0
239	Հիդրոուժեղարարի մղիչի փոխարինում	10000	10000	3000	10000
240	Հիդրոուժեղարարի մղիչի հիմնական նորոգում, ներառյալ աշխատանքները	15000	15000	5000	15000
241	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում կամ փոխարինում	3000	3000	1000	3000
242	Հիդրոուժեղարարի բարձր ճնշման խողովակի փոխարինում	20000	20000	5000	10000
243	Հիդրոուժեղարարի ցածր ճնշման խողովակի փոխարինում	10000	10000	3000	5000
244	Հիդրոուժեղարարի վերանորոգման հավաքածուի փոխարինում	0	0	0	0
245	Ղեկային ձգածողի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000	3000	5000
246	Ղեկային ձողի գնդե հողակալի նորոգում	10000	10000	3000	5000
247	Ղեկային ձգածողի ձգանների հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000	3000	5000
248	Ղեկի հանում տեղադրում կամ փոխարինում	10000	10000	3000	5000
249	Ղեկային ձգածողի ծայրակալների փոխարինում	10000	10000	3000	5000
250	Հիդրոուժեղարարի համակարգի յուղի փոխարինում	5000	5000	2000	3000
9. Արգելակային համակարգ					
251	Վակումային ուժեղարարի փոխարինում	20000	20000	5000	10000
252	Վակումային ուժեղարարի փականի փոխարինում	10000	10000	3000	10000
253	Գլխ. գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000	3000	10000
254	Գլխ. գլանի հիմնական նորոգում, բոլոր աշխատանքների ընդգրկումով	10000	10000	3000	10000
255	Աշխատանքային գլանի հանում և տեղադրում կամ փոխարինում	10000	10000	3000	10000
256	Աշխատանքային գլանի հիմնական նորոգում,	10000	10000	3000	10000
257	Առջևի սուլպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	2000	3000
258	Հետևի սուլպորտի հանում և տեղադրում կամ փոխարինում	5000	5000	2000	3000
259	Առջևի սուլպորտի վերանորոգում	5000	5000	2000	3000
260	Հետևի սուլպորտի վերանորոգում	5000	5000	2000	3000
261	Արգելակի վթարային արգելահանման լծակի փոխարինում	8000	10000	5000	5000
262	Արգելակի վթարային արգելահանման լծակի նորոգում	8000	10000	5000	5000
263	Արգելակային փողրակի փոխարինում	8000	10000	5000	5000
264	արգելակային կոճղակների փոխարինում	4000	4000	2000	4000
265	Արգելակային համակարգի օդահանում	5000	5000	2000	3000
266	սկավառակային կոճղակների փոխարինում	4000	4000	2000	4000
267	թմբուկային կոճղակների փոխարինում	0	10000	0	0
268	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	4000	4000	2000	4000
269	Առջևի արգելակային սկավառակների հղկում 1 հատ	4000	4000	2000	4000
270	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	5000	10000	4000	5000
271	Հետևի արգելակային թմբուկա հղկում 1հատ	0	0	0	0
272	Ձեռքի արգելակի հանում և տեղադրում կամ փոխարինում	0	0	0	0
273	Ձեռքի արգելակային մեխանիզմի վերանորոգում	0	0	0	0

275	Չեռքի արգելակի ճոպանի վերանորոգում	0	0	0	0
276	Հետևի արգելակների կարգավորում	3000	3000	2000	3000
